ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2017 թվականի N 292-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետի պահանջների, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության 2017 թվականի հունիսի 19-ի N 23-Ա ակտի՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լադիկ Նահապետյանին.*

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին սնունդ և տրանսպորտի գումարների վերահաշվարկման արդյունքում ***309200*** *(երեք հարյուր ինը հազար երկու հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Բասենի N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին սնունդ և տրանսպորտի գումարների վերահաշվարկման արդյունքում ***281900*** *(երկու հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր)* ՀՀ դրամը ենթակա է վերականգնման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի դեկտեմբերի 14
ք. Հրազդան